

Ն Ա Ի Ա Ս Ա Ր Գ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ

ԹԻՒ 3 (15)

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ԱՐԳԱՐ

ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

(ՖՈՒԹՊՈԼԻ 2003-2004
ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Ամբողջ տարի մը հարկ եղաւ սպասել՝ վերստին գրաւելու Ա. դասակարգի մեր տեղը, մեզի վայել տեղը: Լիբանանեան ֆութպոլի պատմութիւն կերտած հայկական երկու խումբերը տարուան մը խարխափումէն ետք յաջողեցան վերագտնել իրենց դիրքը, շնորհիւ հայու կամքին, մանաւանդ շնորհիւ հարցերը ճիշդ կարդալու, ճիշդ վերլուծելու կարողութեան: Այսինքն՝ գիտակցեցանք ի վերջոյ, որ մեր երկրին մէջ ֆութպոլը սոսկ մարզախաղ չէ, այլ՝ պատկանելիութեան մը, այս պարագային՝ համայնքային պատկանելիութեան մը մէկ դրսեւորումը: Հուսկ՝ մարզականէն անդին քաղաքական երեւոյթ մը, որմէ անմասն կարելի չէր ու կարելի չէ մնալ:

Ասոր կը հետեւի անշուշտ գլխաւոր հարցումը. Հիմա ի՞նչ:

Պատասխանը յստակ է ու մեկին: Ամէն գնով պայքար՝ ոչ միայն Ա. դասակարգ մնալու, այլեւ հոն պատւաբեր, ընդունելի դիրք մը գրաւելու:

Հ.Մ.Ը.Մ. բաւական մեծ փոփոխութիւններու ենթարկած է խումբը՝ վարչական թէ մարզական թերմիք առումով հաւասարապէս: Մօտէն հետեւող ռեւէ մէկը կրնայ հաստատել, թէ խումբին կացութիւնը յոյս կը ներշնչէ ապագայի հաշուոյն: Առնուազն կայուն կազմ մը կայ՝ իր մարզիչով, մարզիկներով, յանձնախումբով ու մանաւանդ անոնց մօտէն հսկող պատասխանատուներով:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները միշտ ալ արդար ակնկալութիւններ ունեցած են իրենց խումբէն: Տուած են իրենց կարելին՝ թէ՛ բարոյական, թէ՛ միջակայն առումով: Այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է միեւնոյն թափով շարունակելը: Թրիպիւնները լեցնելը, առաւել մեր կարողութեան սահմաններէն ներս միջակայն օժանդակութիւն հասցնելը խումբին՝ մեր պարտաւորութիւնն ու պարտականութիւնն է, որմէ երբեք չենք խուսափած, ընդհակառակն, մի՛շտ տէր կանգնած ենք մեր խումբին բանի եւ գործով, ու պատուոյ խօսք, որ պիտի շարունակենք այդպէս:

Կը մնայ, որ մեր արդար ակնկալութիւնները ախոյեանութեան ասարտին մարմին զգենուն, այսինքն՝ մեր խումբը պատուաբեր դիրք մը գրաւէ դասաւորման աղիւսակին մէջ, ի խնդիր լիբանանահայութեան ուրոյն դիմագիծի պահպանման, ի խնդիր մեր համայնքային շահերուն, վերջապէս ի խնդիր մեր արժանապատուութեան:

ՔՆԱՐԻԿ ՄՈՒԲԱՏԵԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

ՏԵՍՆԵԼ՝ ԷԶ 2



Հ. Մ. Ը. Մ. Ի ՏՂԱՔՆ ՈՒ ԱՂԶԻԿՆԵՐԸ ՀԱՍՍԱՆ ԱՌԱՐՏԱԿԱՆԻՆ, ՍԱԿԱՅՆ ՏԵՂԻ ՏՈՒԻՆ

ՏԵՍՆԵԼ՝ ԷԶ 2

Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՆՈՐ ԿԱԶՄԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԹՂԹԱԾՐԱՐ

ՏԵՍՆԵԼ՝ ԷԶ 4

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

ԼԻՔԱՆԱՆԻ ՏՂՈՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՉ ՓԱՅԼԵՑԱԻ... ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ծատրակի Լիբանանի տղոց ախոյեանութիւնը վերջ գտաւ Ֆայսալ Խէյրալլայի յաղթանակով: Խէյրալլա տիտղոսին արժանացաւ ախոյեանութեան վճռորոշ հանգրուանին, մինչ այդ ոչ մէկ պարտութիւն կրած Քնարիկ Մուրատեանին յաղթելով: Իբրեւ արդիւնք, Քնարիկ Մուրատեան գրաւեց 3րդ - 4րդ դիրքերը: Լիբանանեան եւ արաբական մամուլը գովասանքով արտայայտուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ական քրոջ այս նուաճումին մասին, որովհետեւ աշխարհի մէջ հազուադէպ երեւոյթ է, որ իգական սեռի ներկայացուցիչներ հաւասարե-հաւասար մրցին տղոց հետ:



Քնարիկ Մուրատեան ախոյեանութեան 9 մրցումներէն 5ը աւարտեց յաղթանակով, արձանագրեց 3 հաւասարութիւն եւ միայն 1 պարտութիւն: Այսպիսով ան միջազգային դասաւորման 25 կէտ շահեցաւ եւ հանդիսացաւ ախոյեանութեան ընթացքին միջազգային դասաւորման ամէնէն աւելի կէտեր ապահովող վարպետը:

ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՏԱՊԱԼԵՑ... ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏՂՈՑ ԱԽՈՅԵԱՆԸ

Լիբանան - Սուրիա միացեալ ողիմպիական շաբթուան ծիրէն ներս, Սուրիոյ ճատրակի ֆետերասիոնը 21 Սեպտեմբերին հիւրընկալեց Լիբանանի տղոց հաւաքականը, որ 4 հանգրուաննոց մրցում մը ունեցաւ տեղւոյն հաւաքականին հետ: Յատկանշական էր, որ Լիբանանի հաւաքականին մաս կը կազմէր վերջերս Լիբանանի տղոց ախոյեանութեան 3րդ- 4րդ դիրքերը գրաւած Քնարիկ Մուրատեան:

Հ. Մ. Ը. Մ.ական քոյրը յաջողեցաւ արձանագրել ցնցիչ արդիւնքներ եւ յաղթանակով աւարտեց 3 մրցումներ: Անոր «զոհ»երուն կարգին էր բազմաթիւ անգամներ Սուրիոյ ախոյեան եւ 2 անգամ արաբական աշխարհի ախոյեան Իմատ Հաքքի: Հաքքի, որ նախապէս մասնակցած է աշխարհի ախոյեանութեան աւարտական մրցաշարքին, 19 շաբթուան տեղի տուաւ Քնարիկ Մուրատեանի դէմ:

Լիբանանը ներկայացնող կազմը առաջին անգամ ըլլալով յաջողեցաւ պարտութեան մատնել Սուրիոյ խումբը (10-6), որ աւանդաբար յաղթական դուրս կու գայ Լիբանանի դէմ իր մրցումներուն ընթացքին:

Արաբական մամուլը դրուատիքով խօսեցաւ Քնարիկ Մուրատեանի այս իրագործումին մասին, նկատի ունենալով որ ան խիստ տպաւորիչ արդիւնքներ կ'արձանագրէ տղոց դէմ կատարած իր մրցումներուն ընթացքին, հաւասարապէս տեղական, արաբական թէ միջազգային մակարդակի վրայ: Նշենք, որ Քնարիկ Մուրատեան քանի մը ամիս առաջ Լիբանան - Երոպա բարեկամական մրցաշարքին ընթացքին նոյնպէս յաջողած էր արձանագրել լիբանանեան կազմի լաւագոյն արդիւնքներէն մէկը, յաղթելով Մալթայի ախոյեանին եւ հաւասարութիւններ արձանագրելով Կիպրոսի, Հայաստանի եւ Ալպանիոյ ներկայացուցիչներուն հետ:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ. Մ. Ը. Մ.Ի ՏՂԱՔՆ ՈՒ ԱՂԶԻԿՆԵՐԸ ՀԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ, ՍԱԿԱՅՆ ՏԵՂԻ ՏՈՒՆ ԻՐԵՆՑ ՄՐՅԱԿԻՅՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ

Մոն Լա Սալի մէջ աւարտեցան Լիբանանի փինկ փոնկի տղոց եւ աղջկանց ախոյեանութեան մրցումները: Տղոց կիսաւարտական հանգրուանին իր կատարած մրցումին, Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկ Ռազմիկ Շեմեմեան մեծ իրագործում մը կատարեց, երբ ապահովեց աւարտական մրցումին իր տոմսը, 4-2 արդիւնքով պարտութեան մատնելով Ալֆրէտ Նաժըմը: Աւարտականին, սակայն, Ռազմիկ 4-0 արդիւնքով



պարտութիւն մը կրելէ ետք Ռաշիտ Պըպպոյէն, հանդիսացաւ փոխ ախոյեան:

Աղջկանց կիսաւարտականի մրցումներուն, Լարա Քէչէպաշեան 4-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հ. Մ. Ը. Մ.ի իր խմբակիցը՝ Նոէլ Քէշիշեանը, ապահովեց աւարտականին իր տոմսը, ուր սակայն պարտուեցաւ Ղատա Ըլէյլաթէն՝ 4-2 արդիւնքով: Կիսաւարտականին Ղատա պարտութեան մատնեց Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկներէն՝ Լիզա Պարիքեանը, 4-3 արդիւնքով:

Հակառակ իրենց կրած այս պարտութեան սակայն աղջիկներու ընդհանուր դասաւորման մէջ Լարա տակաւին կը շարունակէ մնալ առաջին: Երկրորդ դիրքը կը գրաւէ Լիզա, մինչ երրորդ դիրքին վրայ կը մնայ Ղատա:



Խառն զոյգի աւարտական մրցումը՝ Լարա Քէչէպաշեան / Ռաշիտ Պըպպո - Ժոզէֆ Շալհուպ / Ռուպա Պըսէպէս զոյգերուն միջեւ վերջ գտաւ Լարա-Ռաշիտ զոյգին յաղթանակով՝ 3-1:

Այսպիսով, Լիբանանի փինկ փոնկի ախոյեանութեան մրցաշարքին աւարտին, Հ. Մ. Ը. Մ. շահեցաւ չորս բաժակ: Լարա Քէչէպաշեան եւ Լիզա Պարիքեան

շահեցան զոյգ աղջկանց ախոյեանութիւնը, իսկ Լարա, Ռաշիտ Պըպպոյի հետ շահեցաւ խառն զոյգի տիտղոսը:

Ա. ԹԵ. ՍԵ. ԷԼ.Ի ԱՂԶԿԱՆՑ ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԻՔ

ՀՈՒՆԳԱՐԱՅԻ ՔԻՐԱ ՆԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ԱԽՈՅԵԱՆ

Անցեալ շաբթափերջին իր աւարտին հասաւ Քալիքի Ա. ԹԵ. ՍԵ. ԷԼ.Ի դաշտերուն վրայ տեղի ունեցող թեմիսի աղջկանց միջազգային մրցաշարքը, որ կը վայելէր մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի հովանաւորութիւնը:

Աւարտական մրցումին, հոծ բազմութեան ներկայութեան, մրցաշարքի թիւ 3 դասուած հունգարուհի Նակի պարտութեան մատնեց թիւ 4րդ դասուած եուկոսլաւ Անա Թիմոթիշը 6-1, 7-5 արդիւնքով:

Նշենք, որ Նակի աղջկանց միջազգային դասաւորման մէջ կը գրաւէ... 219րդ դիրքը:

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՏՈՐ ՄԸ՝ «SPORTIFS ARMÉNIENS - UN SIECLE DE PALMARES»

Հայ մարզաշխարհի նուաճումներուն նուիրուած մեծարժէք համայնագիտարան մը կը հանդիսանայ 2003ին հրատարակուած «Sportifs Arméniens, un siècle de palmarès» հատորը, որուն հեղինակն է Էտուարտ Մարտիրոսեան:


Համայնագիտարանի նախաբանը գրած է ֆութպոլի աշխարհի ախոյեան հայազգի մարզիկ Եւրի Ժորժայէֆ, որ հատորին մէջ տեղ գտած հայազգի մարզիկներուն ակնարկելով կ'ըսէ. «Ի՛նչ ալ ըլլային անոնց պաշտպանած դրօշին գոյները, անոնք հպարտութիւն ներշնչած են բոլոր աշխարհի հայերուն»:

Հատորին սկիզբը հակիրճ կերպով ներկայացուած են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, ապա ժամանակագրական կարգով ներկայացուած է 20րդ դարու հայ մարզիկներու կարեւորագոյն նուաճումները:

Հատորին գլխաւոր բաժինը, որ կ'երկարի շուրջ 100 էջերու վրայ, այբբենական կարգով կը ներկայացնէ մարզաշխարհի պատմութեան մէջ իրենց հետքը ձգած հայ մարզիկները, մարզիչները, խումբերը, միութիւնները եւ պատասխանատուները: Համայնագիտարանին մէջ տեղ գտած են նաեւ մարզական ամսաթերթերու եւ մարզական թեմաներով դրոշմաթուղթերու մասին տեղեկութիւններ:

Գիրքի վերջին բաժիններով ներկայացուած են Ողիմպիական խաղերու մասնակցող հայ մարզիկներու անուանացակը (իրենց արձանագրած արդիւնքներով), Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի կատարած միջազգային մրցումներու ամբողջական ցանկը (մինչեւ 7 Յունիս 2003), ինչպէս նաեւ Եւրոպայի տարբեր ախոյեանութիւններու հայկական ակումբներու կատարած մրցումներու եւ Հայաստանի ֆութպոլի բաժակի ու ախոյեանի տիտղոսներուն տիրացած խումբերու ցանկերը: Այբբենական եւ ժամանակագրական կարգով ներկայացուած են նաեւ Ողիմպիական խաղերու հայազգի մարզիկներու նուաճումները:

Գիրքի վերջին բաժինով ներկայացուած է հատորին մէջ ներկայացուած մարզիկներու ցանկը, ըստ՝ մարզաձեւի:



Edouard Mardirossian

SPORTIFS ARMÉNIENS "Un siècle de palmarès"

Préface Youri Djorkaeff

«ՆԱԻԱՍԱՐԴ»Ը՝ ՆԵՐԿԱՅ

«Sportifs Arméniens - un siècle de palmarès» հատորին մէջ տեղ տրամադրուած է նաեւ «ՆԱԻԱՍԱՐԴ»ին, որ ներկայացուած է իբրեւ «Մարզական պատկերազարդ ամսաթերթ, որ լոյս կը տեսնէ Պէյրութի մէջ Օգոստոս 2002էն ի վեր, իբրեւ «Ազդակ»ի յաւելում»:

NAZARETTIAN Robert, spécialiste français de l'escalade, 30 médailles (1555) à l'EDM. Il fut sélectionné en équipe de Suisse (cette équipe de France joua 2 matches universitaires en 1977 à 1980, alors qu'il était le joueur le plus performant des 18 ans). Il a également joué en 2^{ème} Division à Martigny (1974-1975), à Azun et à Sallanches (Champion de France de 1971 et de 1972, et deux fois vainqueur du Challenge Fournier-Ferrière). Paradoxalement il ne participa pas à l'été 1976. Il est membre du Comité d'administration et d'organisation de l'Escalade de Martigny de 1983 à 1987. Il a été paradiplomate pour les Jeux Olympiques de 1984.

Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՊԱՏՐԱՍՏ՝ 2003 - 2004 ԵՂԱՆԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Լիբանանի ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանության 2003 - 2004 եղանակին նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբը իր կազմին ներս կատարեց փոփոխություններ: Խումբին միացան չորս նորեկ մարզիկներ, մինչ հեռացողները եղան թիով ինը:

«Բանանց» Երեւանի մաս կազմող հայրենի երկու մարզիկներ՝ Ղիպերո Կարեն Բարսեղեան եւ յառաջապահ Արթիւր

Քոչարեան կը հանդիսանան կազմին երկու «օտարական»ները: Իսկ տեղական ակումբներէն խումբին միացան Ահմէտ Թահա (Մա-

պարրայէն) եւ Անթոնիօ Սոթօ (Սալամէն), երկուքն ալ միջնապահ:

Տարբեր պատճառներով խումբէն «հեռացան» ինը մարզիկներ՝ Սամուէլ Պօղոսեան, Բաֆֆի Ծուֆայեան, Տէյվիտ Աճէմեան, Տէնի Նասրը, Նեպիլ Ըէյիօ, Գէորգ Փուշեան, Սերոբ Էքմէքեան, Մհեր Պերպէրեան եւ Թոմաս Պիրոբ:

Այսուհանդերձ Սամուէլ Պօղոսեան Հ.Մ.Ը.Մ.Ի կազմին ներս ստանձնեց բերդապահներու մարզիչի պաշտօնը:

Ստորեւ՝ 2003-2004 եղանակի ներկայացուցչական կազմը.

■ ԲԵՐԳԱՊԱՂԱՆԵՐ

Սաֆօ Էսփիճեան
Ժաք Պչարճեան
Յարութ Սարգիս

■ ՅԵՏՍԱՊԱՂԱՆԵՐ

Կարեն Բարսեղեան
Վարդան Գոշոյեան
Վարդան Պոյաճեան
Յարութ Կիլիզեան
Լեւոն Խաչատուրեան
Յարութ Սնրճեան

■ ՄԻՋՆԱՊԱՂԱՆԵՐ

Անթոնիօ Սոթօ
Ահմէտ Թահա
Ծոնի Քոթանի
Սաֆօ Տօնապետեան
Նէնօ Պերպէրեան
Ռոպէր Ատուրեան

■ ՅԱՌԱՋԱՊԱՂԱՆԵՐ

Արթիւր Քոչարեան
Դրօ Քէհէյեան
Յակոբիկ Տօնապետեան
Վարդան Ղազարեան



ՍԱԳՕ ԷՍՔԻՃԵԱՆ



ԺԱՔ ՊՉԱՐՃԵԱՆ



ԿԱՐԷՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ



ՎԱՐԴԱՆ ԳՈԾՈՅԵԱՆ

ԲԵՐԳԱՊԱՂԱՆԵՐ

ՍԱԳՕ ԷՍՔԻՃԵԱՆ (22 տարեկան).- փոխանցուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ժունիորներէն: Չորս տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբին, ինչպէս նաեւ Լիբանանի երիտասարդներու ազգային խումբին

ԺԱՔ ՊՉԱՐՃԵԱՆ (28 տարեկան).- երկու տարիէ ի վեր մաս կը կազմէ խումբին: Փոխանցուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրճ Համուտի կազմին

ՅԱՐՈՒԹ ՍԱՐԳԻՍ (17 տարեկան).- փոխանցուած՝ ժունիորներէն: Լիբանանի կրտսերներու ազգային խումբին հիմնական բերդապահ



ՎԱՐԴԱՆ ԳՈԾԱՃԵԱՆ



ՅԱՐՈՒԹ ԿԻԼԻԻԶԵԱՆ

www.aztagdaily.com



ԼԵՒՈՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



ԱՆԹՈՆԻՕ ՍՈՐՕ



ԱՀՄԷՏ ԹԱՀԱ



ԾՈՆԻ ԲՈՒԹԱՆԻ

ՅԵՏՄԱՊԱՀՆԵՐ

ԿԱՐԷՆ ԲԱՐՍԵՂԵԱՆ (28 տարեկան).- նախապես Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբին մաս կազմած, 1999-2000՝ Արարատի, ապա փոխանցում՝ Սպարտակ Երևանի (2001-2002): Նախքան Հ.Մ.Ը.Մ.ի միանալը՝ Բանանց Երևանի (2002-2003): Սպարտակի հետ, ան Հայաստանի ախոյեանությունը ասարտեց 3րդ դիրքին վրայ, իսկ Բանանցի հետ՝ 2րդ դիրքին վրայ

ՎԱՐԴԱՆ ԳՈՇՈՅԵԱՆ (30 տարեկան).- փոխանցում՝ Պուրճ Համուտեն: Ան անցեալ եղանակին մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչականին

ՎԱՐԴԱՆ ՊՈՅԱԺԵԱՆ (23 տարեկան).- փոխանցում՝ ժունիորներեն: Երեք տարի է ի վեր մաս կը կազմե խումբին

ՅԱՐՈՒԹ ԿԻԼԻԻԶԵԱՆ (23 տարեկան).- չորս տարի է ի վեր Հ.Մ.Ը.Մ.ի մաս կը կազմե, փոխանցում է ժունիորներեն

ԼԵՒՈՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ (28 տարեկան).- շուրջ տասը տարուան փորձառություն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի յետսապահ գիծին կարելոր մարզիկներեն

ՅԱՐՈՒԹ ՍՆԸՔԺԵԱՆ (18 տարեկան).- ժունիորներու խմբապետ եւ Լիբանանի կրտսերներու ազգային խումբին մաս կազմող



ՍԱԳՕ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

ՄԻՋՆԱՊԱՀՆԵՐ

ԱՆԹՈՆԻՕ ՍՈՐՕ (23 տարեկան).- փոխանցում՝ Սալամեն: Ան Ա. դասակարգին մեջ մեկ տարուան փորձառություն ունի

ԱՀՄԷՏ ԹԱՀԱ (28 տարեկան).- փոխանցում՝ Մապարրայեն: Նախապես մաս կազմած է նաեւ Թապապ Սահելի, Ահլի Սայտայի եւ Հ.Մ.Մ.ի:

ԾՈՆԻ ԲՈՒԹԱՆԻ (23 տարեկան).- հինգ տարի է ի վեր մաս կը կազմե Հ.Մ.Ը.Մ.ի: Նախապես՝ Ռաուտա Տըքուանէ

ՍԱԳՕ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ (30 տարեկան). նախապես ժունիորներու մաս կազմած, ան 1990էն ի վեր ներկայացուցչականի անդամ է

ՆԷՆՕ ՊԷՐՊԷՐԵԱՆ (25 տարեկան).- փոխանցում՝ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտեն: 2որս տարի է ի վեր մաս կը կազմե ներկայացուցչական խումբին

ՌՈՊԷՐ ԱՏՈՒՐԵԱՆ (24 տարեկան). այս տարի Պուրճ Համուտեն փոխանցում ներկայացուցչականին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

ԵՈՒ. ԷՍ. ՕՓԵՆ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴՈՒՐՍ ՄԵԱՅ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԻՆ

Թեմիսի Եու. Էս. Օփրն կրան շլեմի մրցաշարքի 2րդ հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան 6-3, 6-4, 4-6 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք ամերիկացի Ճէյմս Պլէքէն, դուրս մնաց մրցաշարքէն:



Եու. Էս. Օփրնի Գ. հանգրուանին իր կատարած մրցումին, արժանթինահայ Դաիթ Նալպանտեան 7-5, 6-7, 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Մարք Ֆիլիփուսիսը (Աւստրալիա)՝ ապահովեց Դ. հանգրուանին իր տոմսը:

Դ. հանգրուանի մրցումներուն, արժանթինահայ Դաիթ Նալպանտեան ապահովեց քառորդ աւարտականին իր տոմսը՝ 3-6, 7-6, 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք զուիցերիացի Ռոժէ Ֆետերըրը:

21 տարեկան Նալպանտեան, որ այսպիսով իր ասպարէզին ընթացքին 5-0 արդիւնքով կը յառաջանայ Ֆետերըրի վրայ, պէտք ունեցաւ երկու ժամ եւ 50 վայրկեանի՝ պարտութեան մատնելու համար իր մրցակիցը:

Նալպանտեան այս մրցումին կատարեց 16 էյս, վերջինը՝ մաշփոյնի ընթացքին:

Կիսաւարտական հանգրուանին, Դաիթ Նալպանտեան 6-7, 3-6, 7-6, 6-1 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք ամերիկացի Էնտի Ռոտիքէն՝ ձախողեցաւ հասնիլ աւարտականին:

ՍԱՄՊՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՆՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՇԱՀԵՑԱԻ ԵՐԵՔ ՈՍԿԻ ԵՒ ՄԷԿ ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼՆԵՐ

Ուրալսքի (Ռուսիա) մէջ աւարտած սամպոյի աշխարհի երիտասարդներու եւ պատանիներու ախոյեանութեան մրցումներուն, Հայաստանի երեք սամպիստներ տիրացան ոսկի մետալներու, իսկ մէկ այլ սամպիստ՝ արծաթ մետալի:

Երիտասարդներու մրցումներուն, աշխարհի ախոյեան հանդիսացան Յովհաննէս Դմիտրեան (57 քկ. դասակարգին մէջ) եւ Լայէրտ Աւագեան (74 քկ.), իսկ պատանիներու ախոյեան՝ Վահան Վարդանեան (62 քկ.): Երիտասարդներու մրցումներու փոխ ախոյեան հանդի-

սացաւ՝ Յովհաննէս Մալխասեան (62 քկ.): Խմբային դասաւորման մէջ Հայաստան գրաւեց երրորդ (երիտասարդներ) եւ եօթներորդ (պատանիներ) դիրքերը: Երկուքին պարագային ալ Ռուսիա գրաւեց առաջին դիրքը: Մրցաշարքին լաւագոյն իրաւարար ընտրուեցաւ Հայաստանի պատուիրակութիւնը գլխաւորող Էդուարդ Ասլանեան:

ԵՒՐՕ - 2004. ՉՏՈՒՄ ՄՐՅԱՇԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՅՈՒՆԱՍՏԱՆ 0 - 1

Եւրո - 2004ի գտումի մրցաշարքին, Հայաստանի ազգային խումբը, որ Երեւանի մէջ հիւրընկալեց Զ. խմբակին պարագլուխի դիրքը գրաւող Յունաստանը, 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց: 34րդ վայրկեանին Վրիզաս նշանակեց մրցումին «որք» կոլը: Երթին, Յունաստանի մէջ եւս պարտութիւն մը կրած Հայաստան, այս մրցումէն ետք վերջ-



նականապէս կորսնցուց Փորթուգալի տոմս մը ապահովելու իր յոյսերը, հակառակ անոր որ տակաւին երկու մրցում ունէր կատարելիք, յաջորդաբար՝ Հիւսիսային Իրլանտայի (10 Սեպտեմբեր) եւ Սպանիոյ դէմ (11 Հոկտեմբեր):

Չորս պարտութիւն կրած եւ մէկական յաղթանակ ու հաւասարութիւն արձանագրած Հայաստան չորս կէտով մնաց չորրորդ դիրքին վրայ:



ՌՌՒՍԻԱ ՀԱՆԴԻՍԱՑԱԲ ԱՂՋԿԱՆՑ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Առաջին անգամ ըլլալով
իր պատմութեան մէջ,
Ռուսիոյ պասքեթպոլի
աղջկանց հաւաքականը
տիրացաւ Եւրոպայի
ախոյեանութեան
աւարտականին
59-56 արդիւնքով
տապալելէ ետք Չեխիոյ կազմը:
Յունաստանի մէջ
տեղի ունեցող այս
ախոյեանութեան
երրորդ դիրքը գրաւեց
Սպանիա, որ Լեհաստանի
կազմը տապալեց
87-81 արդիւնքով:
Ֆրանսա հանդիսացաւ 5րդ,
Պելճիքա՝ 6րդ եւ Սլովաքիա՝ 7րդ:
Նշենք, որ առաջին
երեք դիրքերը գրաւող
երկիրները իրաւունք
ստացան մասնակցելու
Աթենքի մէջ տեղի ունենալիք
2004ի Ողիմպիական խաղերուն:



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

Շարունակուած՝ 6րդ էջէն

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱ - ՀԱՅԱՍՏԱՆ 0 - 1

Հայաստանի ֆութպոլի ազգային խումբը (Ջ. խմբակ), որ Պելֆասթի մէջ հիւրն էր Հիւսիսային Իրլանտայի, երթին իր արձանագրած յաղթանակին նման, նոյն արդիւնքով (1-0) պարտութեան մատնեց իր մրցակիցը: Մրցումին «որք» կոչը նշանակուեցաւ Ա. կիսախաղին, շնորհիւ՝ Արման Քարամեանի (27րդ):

Հայաստան, որ այսպիսով արձանագրեց մրցաշարքի իր երկրորդ յաղթանակը, այժմ եօթ կէտով կը մնայ չորրորդ դիրքին վրայ: Նշենք, թէ Հայաստան գտումի իր վերջին մրցումը պիտի կատարէ յառաջիկայ 11 Հոկտեմբերին, իր դաշտին վրայ հիւրընկալելով Սպանիան:

ՃԱՏՐԱԿ

ԳԱՔՐԻԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

Հայաստանի տղոց ճատրակի ախոյեանութեան վճռական հանգրիւանը, որ տեղի ունեցաւ Գաքրիէլ Սարգսեանի եւ Արման Փաշիկեանի միջեւ, վերջ գտաւ ի նպաստ առաջինին, որ 1,5 - 0,5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով հանդիսացաւ Հայաստանի ախոյեան:

Սարգսեան, որ 1999ին եւս հանդիսացաւ Հայաստանի ախոյեան, առաջին մրցումին 42րդ շարժումին իր յաղթանակը արձանագրեց, մինչ երկրորդ եւ վճռական մրցումին 38րդ շարժումին հաւասարութիւն մը արձանագրեց Փաշիկեանի հետ:

Անոնցմէ իւրաքանչիւրը պիտի ստանայ մէկուկէս միլիոն դրամ:

- ԿՐԵՏԷ կղզիին (Յունաստան) մէջ տեղի ունեցած ճատրակի ցուցադրական մրցումի մը ընթացքին, Կէրի Գասպարով 5,5 - 0,5 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, պարտութեան մատնելով վրացի Զուրապ Այզմայարաշվիլին:

●ՎԻԵՆՆԱՅԻ մէջ (Աւստրիա) տեղի ունեցած ճատրակի միջազգային մրցաշարքի աւարտին, Երեւանէն Սուրէն Պետրոսեան 6,5 կէտ ապահովելով գրաւեց ընդհանուր դասաւորման երկրորդ դիրքը՝ 150 մասնակցողներուն մէջ: Ան միայն կէս կէտով ետ մնաց տիտղոսին տիրացած աւստրիացի իր մրցակիցէն:

●ԳԵՐՄԱՆԻԱՆ ներկայացնող Մէրի Թովմասեան առաւելագոյն ինը կէտերէն 7,5 կէտ ապահովելով դարձաւ աղջկանց ախոյեան:

●ՊՈԼՍՈՅ մէջ (Թուրքիա) տեղի ունեցած ըմբշամարտի ազատ ոճի աշխարհի երիտասարդներու ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը բերած հայրենի ըմբիշ Սուրէն Մարկոսեան (Գառնի) 66 քկ. դասակարգին մէջ յաջողեցաւ արծաթ մետալի մը տիրանալ:

●ՎԱՐՇԱԻԱՅԻ մէջ (Լեհաստան) տեղի ունեցած կոփամարտի Եւրոպայի երիտասարդներու ախոյեանութեան մրցումներուն, 57 քկ. դասակարգին մէջ Հայաստան յաջողեցաւ միայն պրոնզ մետալի մը տիրանալ, այդ ալ շնորհիւ Էտկար Մանուկեանի (Գիւմրի), որ կիսաաւարտականին պարտութիւն կրեց:

●ՆՈՅՆՄԱՐԵՐԷՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ տեղի ունենալիք ճատրակի աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հայրենի վեց վարպետներ: Հաւանական է, որ անոնց միանայ նաեւ եօթներորդ վարպետ մը՝ Ռաֆայէլ Վահանեան:

Ըստ Հայաստանի ճատրակի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Գագիկ Յովհաննիսեանի՝ Հայաստան, Ռուսիայէն ետք երկրորդ մեծաթիւ մասնակցողները ունի (14 եւ աւելի):



ԱՐԹԻՐ ՔՈՉԱՐԵԱՆ



ԴՐՕ ՔԷԼԷՅԵԱՆ



ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ



Մարգիշ ՎԱՉԷ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅԱՌԱԶԱՊԱՀՆԵՐ

ԱՐԹԻՐ ՔՈՉԱՐԵԱՆ (28 տարեկան).- փոխանցում՝ Բանանցէն: Ան նախապէս մաս կազմած է Հայաստանի ֆութպոլի ազգային խումբին, ապա յաջորդաբար՝ Արարատի (1990 եւ հանդիսացած ախոյեան), իրանեան Ա. դասակարգի Սպահան խումբին (1994), Փինիկի (1996, հանդիսացած ախոյեան), Սպարտակի (1997), դարձեալ Սպահանի (1999), Բանանցի (2002):

ԴՐՕ ՔԷԼԷՅԵԱՆ (33 տարեկան).- փոխանցում՝ ժուճորներէն, ան 1986էն ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի: 1999ին փոխանցում է Նըթմէի, որուն հետ մնացած է երեք տարի, ապա վերադարձած՝ Հ.Մ.Ը.Մ. (2002-2003): Լիբանանի Ազգային խումբին նախկին մարզիկ

ՅԱԿՈԲ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ (21 տարեկան).- նախապէս ժուճորներու մաս կազմող, ան հինգ տարիէ ի վեր ներկայացուցչական խումբին մէջ է: Լիբանանի ֆութպոլի ազգային խումբի մարզիկ եւ Ողիմպիական խումբի խմբապետ

ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ (33 տարեկան).- 1992էն 1998 մաս կազմած Հ.Մ.Ը.Մ.ի: Ապա (1999) միացած Սաթէսի, որմէ ետք (2002-2003) վերադարձած՝ Հ.Մ.Ը.Մ.: Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին նախկին մարզիկ, նախապէս ընտրուած է Ասիոյ լաւագոյն ֆութպոլիստը:



ՍԱՄՈՒԷԼ ԴՕՂՈՍԵԱՆ



ՅՈՎԱԷՓ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ԺԱԳ ՊԱՊՈՅԵԱՆ



ԲԻԻԶԱՆԴ ՀԱՍԸՐԾԵԱՆ



ՍԵԻԱԿ ԶՈՄԾԵԱՆ